

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ
ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ
ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

- | | |
|---------------|---|
| Տ. Դավթյան | ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Վ. Գաբրիելյան | ՀՀ ֆինանսների նախարար |
| Գ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Հ. Թովմասյան | ՀՀ արդարադատության նախարար |
| Կ. Մինասյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ |
| Ն. Երիցյան | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ |
| Ա. Հովսեփյան | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն |
| Ա. Բաղայան | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար |

Հրավիրվածներ՝

- | | |
|--------------|---|
| Հ. Մարգարյան | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր |
| Տ. Գևորգյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ |
| Վ. Տերտերյան | ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ |
| Կ. Արեյան | Երևանի քաղաքապետի տեղակալ |
| Ա. Մուսայան | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ |

Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ա. Մնացականյան	Երևանի քաղաքապետի խորհրդական
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն

1. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի տրանշ 1-ի (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակներում անցկացված Ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ ամրապնդման խորհրդատուի ընտրության միջազգային բաց մրցույթի արդյունքների քննարկում և հաստատում

(Ա. Բադայան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի տրանշ 1-ի (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակներում անցկացված Ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ ամրապնդման խորհրդատուի ընտրության միջազգային բաց մրցույթի արդյունքները և հաղթող ճանաչել Swedish National Road Consulting AB (Sweroad) (Շվեդիա), Advanced Logistic Group (ALG) (Իսպանիա), SIPU International AB (Շվեդիա), DEVTEC Nepal Pvt Ltd (Նեպալ) և «Ադինֆոսիս» կառավարման ինստիտուտ» ՓԲԸ (Հայաստան) ասոցիացիային.

2) հանձնարարել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար Ա. Բադայանին՝ այսուհետ նախօրոք ներկայացնել մրցույթի մասնակիցներին տրված՝ գնահատող հանձնաժողովի անդամների գնահատականները (աղյուսակի տեսքով).

3) հանձնարարել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար Ա. Բադայանին և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և Քաղաքային կայուն զարգացման

ներդրումային ծրագրերի գնահատման հանձնաժողովի կազմում որպես անկախ փորձագետ ընդգրկել նաև Ա. Ամիրխանյանին:

2. Սվիդիշ Նեյշընըլ Ռոուդ Քոնսալթինգ ԷՔԻ (Սվիդոուդ) (Շվեդիա) կազմակերպության հետ (որպես ասոցիացիայի առաջատար կազմակերպություն) կնքվելիք պայմանագրի շուրջ բանակցությունների վարում

(Ա. Բադայան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար Ա. Բադայանին՝ «Swedish National Road Consulting AB» (Sweroad) (Շվեդիա) կազմակերպության ներկայացուցիչների հետ բանակցել կնքվելիք պայմանագրի գնի շուրջ և գալ փոխհամաձայնության 4.2 մլն ԱՄՆ-ի դոլարի շրջանակներում:

3. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի գնումների պլանի քննարկում և հաստատում

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) Հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝

ա. ԱԶԲ-ի հետ վերաբանակցել և առաջարկել պայմանագրի նախապայմանի՝ ճանապարհների վերանորոգման համար յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին գումարի 5 տոկոսի չափով ավելացման պահանջի կատարման ժամկետի փոփոխություն,

բ. ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի առաջարկությանը համապատասխան՝ տեխնիկական առաջադրանքների մշակման գործընթացում հաշվի առնել միանման պայմանագրերի կազմման պահանջը.

գ. ԱԶԲ-ի ներկայացուցիչների հետ քննարկել ժամանակակից նորմերին համապատասխան կառուցվող ճանապարհների որակական գնահատման նորագույն նորմերի

սահմանման հարցը և կառավարման խորհրդի անդամներին ներկայացնել համապատասխան առաջարկություն,

դ. ԱԶԲ-ի ներկայացուցիչների հետ քննարկել տեխնիկական առաջադրանքներում, որպես նախապայման պետություն-մասնավոր հատված համագործակցության ձևաչափի շրջանակներում կառուցված նոր ճանապարհների հարակից հատվածների սպասարկման հարցի կարգավորման հնարավորությունը և արդյունքները ներկայացնել կառավարման խորհրդի անդամներին.

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Բեգլարյանին՝

ա. քննարկել միջազգային չափանիշներին համապատասխան պետական ճանապարհաշինարարական լաբորատորիա ստեղծելու հարցը, որի հիմնական գործառույթը կլինի մասնավոր ճանապարհաշինարարական լաբորատորիաների կողմից տրվող փորձագիտական եզրակացությունների՝ ընդունված ճանապարհաշինարարական նորմերին համապատասխանության հավաստումը և արդյունքները ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ,

բ. ուսումնասիրել կառուցվող ճանապարհի եռաչափ մոդելավորմամբ ֆիլմի սահմանված ժամկետում չներկայացնելու հանգամանքները և դրա մասին զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ